



«ԹՈՂ ՏՈՒԷՐ ՄԱՆԵՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՉԻ ԳԱՆ» : ԴՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ՄԱՐՏ 4 . 1875 .

Թիի 3



այլ ևս չկարգացուիլ : Այն միջոցին Մարիամ և Եսթեր իրարու հետ կը կուռէին իրենց թըւ աբանութեան նոր տախտակին համար . Յակոբ և Կարապետ ալ առանձին տեղ մը քաշուելով սկսան ծեծկուիլ զմեղինի մը համար : Գոր ըստ պատահման գտած էին : Յակոբ ներս եկաւ աչքին տակը ճանկաւրւած, Կարապետին ալ ճակտին վրայ ապտակի մը սե նշանը կը տեսնուէր : Բարոցն արձակուելէն ետքը, վարժապետն իր գրասեղանին առջև նստելով սկսաւ խորհիլ թէ ինչպէս ընէր որ իր աշակերտները միշտ բարե ըլլալ սորվէին : Այսպէս խորհելով նիրհեց, և քունին մէջ սա երազը տեսաւ : Կը թուէր թէ առտու էր, և երբ զանգակը հընչեցուց, բոլոր աշակերտները մտքուր ե-

**ԻՐ ԱՐՀԵՍԵ ԱՍՐՎԻԼ**

Այս պզտիկ շուները մուկ բռնող շուներու տեսակէն են, և անոնց մայրը մուկ մը բռնելով բերած է զայն իր ձագերուն ցուցնելու, որ անոնց եռանդը շարժի նոյն արհեստը սորվելու : Զագերուն այսպիսի եռանդ ունենալը պատկերին մէջ անգամ կը տեսնուի անոնց աչքերէն :

**ՎԱՐՅԱՊԵՏԻ ՄԸ ԵՐԱՋԸ**

Ստանօք բարի և իմաստուն մարդ մը՝ որ կը բոլոր ժամանակը առած էր տղաք կրթելու՝ շատ անգամ կը տեսնէր որ տղայք աւելի փոյթ

ունէին խաղալու, երբեմն նաև իրարու հետ կուռելու, քան թէ սորվելու իրենց դասերը : Օր մը այս վարժապետին աշակերտներն անոր շատ նեղութիւն տուին : Պօլոս, փոխանակ սորվելու իւր աշխարհագրութեան դասը, թուղթի կտորները բոբորելով կը նետէր դէպ ի ձեղունք : Յովհաննէս ալ փոխանակ բերնուց սորվելու բազմապատկութեան աղիւսակը, ճանճ մը բռնեց, և դնդաւեղ մը անցունելով խեղճ կենդանւոյն մէջքէն, անգլխաբար կը նայէր անոր տանջուելուն : Բոկ Պետրոս իր արտառ մատուրներն այնչափ քսեց քերականին վրայ, որ գերերը սկսան

րեաներով և շիտակ սանարուած մազերով եկան հանդարտութեամբ նըստան իրենց տեղերը, և զուարթութեամբ բացին իրենց գիրքերը և սկսան կարգաւ իւրաքանչիւր աշակերտ զգուշութեամբ կը նայէր չարասել և չպատուել իր գիրքը, և վերջապէս երբ անոնք համար տալու եկան, ամէնքն ալ շատ աղէկ սորված էին իրենց դասերը : Երազին մէջ վարժապետին կը թուէր նաև թէ, իւրաքանչիւր աշակերտ ունէր զմեղին մը, կարուած և մաքրուած եղունգներ, նոյնպէս կարուած մատիտ մը : Վերջապէս իրիկուն ըլլալով, երբ դպրոցն աւարտեցաւ, ամէն աշակերտ վար-


3,

4.

Ժապետին մօտենալով, քաղաքավարութեամբ «գիշեր բարի» ըսելով կը մեկնէր մեզմով, փոխանակ վազելով իր գլխարկը կամ կերակուրին կողովէ առնելու, որպէս զի վայրկեան մը առաջ դուրս ելլէր դպրոցէն. և փոխանակ պոռալով փողոց ելլելու և շուները վախցնելու, այնպէս հանդարտ կ'ելլէր դպրոցին դռնէն դուրս որ ձայն չէր լսուէր:

Վարժապետն արթննալով ըսաւ. «Ո՛հ, երանի թէ ջանային աշակերտներս այնպէս ընել որ երազս կատարուէր:»

Սիրելի տղայք, կան ձեր մէջ ջանացողներ որ իրենց վարժապետին ալ ասոր նման երազը կատարուի:



Խեղճ Թրթռի

Սարգի մը ոտայնին թևերնայնպէս բարակ են, որ ճանճ մը կրնայ զանոնք փրցնել: Այս պատկերին մէջ տեսնուած թրթրոյ պէս թրթուր մը կրնայ այն թեւերէն շատերը մէկէն այնպէս դիւրաւ փրցնել, որ սարգէն ամենին չի վախար:

Բայց թրթուրներն երբեմն շատ յամր կը քալեն, և սարգ մը կրնայ այնպէս ծանր շարժող թրթրոյ մը բոլորտիքը շատ անգամ, քան, յետոն, նաև քանի մը հարիւր անգամ, դառնալ, և ամէն դառնալուն կըրնայ մէյմէկ թելով պատել խեղճ թրթուրը: Երբ թրթուրը վերջապէս արագ շարժելու կը սկսի, ինքզինք այն հարիւրաւոր թեւերով այնպէս կ'ապուած կը գտնէ, որ չի կրնար զանոնք փրցնել, և սարգը զայն այնպէս գերի բռնած ըլլալով, անոր ինչ որ կ'ուզէ կ'ընէ:

Տղայք, դուք այս թրթրոյն պէս մի ըլլաք, երբ սատանան ձեր բոլորտիքը պղտիկ պղտիկ որոգայթներ կը լարէ: Թէև փոքր բաներ են ինչ որ սատանան ձեզ ընելու կը գրգէ, եթէ զանոնք ի սկզբան չէք մերժեր, քիչ առեանէն պիտի գտնէք որ սատանան ձեր ձեռքը սոքը կ'ապած կ'աշխանդած է:

ԵՂԻԱ ԵՒ ԱԳՌԱՆԵՐԸ

Յակոբին հայրը մեռած էր, և ինք պղտիկ տան մը մէջ իր մօրը հետ միակ կը բնակէր: Մայրը կար կը կարէր, Յակոբ ալ կը գործէր պարտէզը: Անոնք կ'ալ մը ունէին, և Յակոբ այս կողմ ալ կը դարձնէր: Այսպէս անոնք խնայալուծեամբ կ'ապրէին:

Մասաիկ ձմեռուան պատճառաւ Յակոբ և մայրը շատ նեղութիւն կը կրէին: Այն միջոցին անոնց կ'ով մեռաւ: Խեղճ Յակոբ լացաւ, մայրն ալ լացաւ: Բայց Յակոբ որ քաջ տղայ էր ըսաւ մօրը. «Մայր, մի լար, ինչպէս որ ըլլայ կրնանք ապրիլ, և թերևս մեր դրացին Հաճի Յարութիւն ինծի գործ կու տայ որ անտառ երթամ անոր հետ փայտ կտրելու՝ այս ձմեռ ծախելու համար: Տղուն այս խօսքին վրայ մայրը սրբեց այտընները, քաջալերեց նաև զանի, թէպէտ չէր գիտեր թէ այնուհետև ինչպէս պիտի ապրէին, քանի որ կ'ով մեռած էր:

Քիչ մը ետքը, պառկելու երթալէն առաջ, մայրն Աստուածաշունչը բանալով կարգաց Եղիայի և ագռաներուն պատմութիւնը: Մայրը խորհելով այս պատմութեան վրայ, մտքէն կ'ըսէր. «Ինչու համար Աստուած հիմա ալ պիտի չկերտիր իր զաւկները որ կարօտութեան մէջ են:» Իսկ Յակոբ կը շարժանորթ թէ ինչո՞ւ համար Աստուած Եղիան կերակրելու համար ագռաները դրկեց, և ոչ ազաւնիներ կամ ուրիշ թռչուններ: «Քանզի» կ'ըսէր, «գիտեմ որ ագռաները քիսս ընելէ ուրիշ բան չեն գիտեր. անոնք ինչ որ կը գտնեն, գողնալով կը ասնին:»

«Թերևս» ըսաւ մայրը, «ագռաներուն այս բնութիւնն էր պատճառ որ Աստուած զանոնք դրկեց: Ուզեց ցուցնել Եղիայի թէ ագռաներն անգամ կրնան բարիք ընել:»

«Բայց ես չեմ կրնար հասկնալ այս պատմութիւնը» ըսաւ Յակոբ, «Ագռաները կերակուրն ո՞ր գտան:»

«Ես ալ ասոր վրայ կը զարմանամ» ըսաւ մայրը:

Քիչ մը ետքը Յակոբ քնանալով երազին մէջ կ'ովեր, ագռաներ և Եղիան տեսաւ:

Հետեւեալ առտուն Յակոբ արթննալով գնաց Հաճի Յարութիւնը փրնտուել, անոր հարցնելու համար թէ կարճօտ էր արգեօք օգնականի մը փայտերն անտառէն տուն բերելու: Եր-

թալու առեւը ճամբան նորէն միտքը եկաւ Եղիայի և ագռաներուն պատմութիւնը. «Կը զարմանամ» կ'ըսէր միտքէն, «ինչպէս ըրին ագռաները, ուստի՞ գտան հացն ու միսը, և Եղիա ինչպէս եփեց միսը: Ագռաները կերակուրը Եղիային ճիշդ քովը բերին, թէ անկէ վախնալով հեռու տեղ մը դրին:» Այն միջոցին Յակոբ քանի մը ագռաւ տեսաւ, որ մեծ մայր ծառի մը ճիւղերուն մէջ մտան, և իտիոյն Յակոբին հետաքրքրութիւնը շարժեցաւ տեսնելու թէ ինչպէս կ'ըլլար ագռաներուն բոյնը ձմեռուան եղանակին. ուստի և շուտով ծառին վրայ ելլելով տեսաւ որ բոյնը ծառին ճիւղերովը ծածկուած էր:


Բոյնը շինուած էր, ինչպէս որ թռչունք սովորաբար կը շինեն. այսինքն՝ ծառի ճիւղերէ, վերը լայն, վարը նեղ, և մէջը մազով, բրդով և տերևներով պատած: Յակոբ չուզեց աւրել բոյնը, քանզի այնպէս գեղեցիկ շինուած էր այն որ, աշխարհի ամենէն իմաստուն ճարտարապետը չէր կրնար անոր նմանը շինել: Բայց մինչ Յակոբ կընայէր բոյնին, զարմանալի բան մը տեսաւ. բոյնին հետ լսթ մը հիւսուած էր, և քաշելով այն լսթը տեսաւ որ քսակ էր, և մէջը կարծր և հնչող բաներ կային: Յակոբ զարմանքէն չկրցաւ իր աշուրնեւրուն հաւատալ, երբ քսակը բանալով մէջը չորս հատ փայլուն ոսկի գտաւ:

Մտաւն վրայ նստելով քանի մը բողբոջ ոսկիներուն նայելէն ետքը, դարձեալ Եղիան յիշեց, Վերնայելով տեսաւ որ ագռաները դեռ կը թրջուէին: «Այո», ըսաւ Յակոբ, «Եղիա մըն ալ ես եմ, ահա ագռաները, և ահա բան մ'ալ որ հացի և մսի չափ պատուական է:»

Ինչպէս և ուստի՞ հոն եկաւ այն քսակը որ ոչ ոք իմացաւ: Կ'երևի թէ ճամբորդ մը ձգած էր զայն ճամբուն վրայ, և ագռաները կրօցով առնելով զայն՝ գործածած էին, ուրիշ կակուղ նիւթերու հետ, այն բոյնը շինելու:

Որովհետև քսակին տէրը գտնել կարելի չէր, Յակոբ և մայրն անոր մէջի ստակը գործածելով ուրիշ կով մը դնեցին և Յակոբ ըսաւ իր մօրը. «Մայր, կարծեմ թէ Աստուած պատուիրեց ագռաներուն այն ստակը մեզի տալ, ինչպէս որ պատուիրած էր անոնց Եղիան կերակրել. այս երկու գէպքին մէջտեղ ես ամենեւին տարբերութիւն չեմ տեսներ:»

Մենք ալ չենք տեսներ:



Ա. Բ. Ա. Գ. Ի. Լ.

Կը տեսնէ՞ք այս բարձր աշտարակը, և անոր ծայրի թռչունները: Այս աշտարակն է Ուռնա, որ կը կարծուի թէ Աբրահամու հայրենեաց, Գաղղէ-ացւոց երկրին, մօտ է: Այս երկայնա-կառուց և բարձրասրուն թռչունները կը կոչուին Արագի: Տղայոց Աւետա-բերը կարգացողներէն շատերը, մանա-կանց Փոքր Ասիա բնակողները, կը ճանչնան այս կենդանին: Երբ Արա-գիը կու գայ, այն տեղացիները կը հասկնան թէ գարուն հասած է, քան-զի արագիը չի գար, մինչև որ օդերը չեն տաքնար: Շատ զուարճալի է տեսնել այս թռչունը որ մէկ ոտքին վրայ կայնած մեծ ուշադրութեամբ կը նայի անցորդաց: Արագին իր բոյ-նը կը շինէ բարձր ծառերու կամ աշտարակի մը գագաթը, ինչպէս կը տես-նուի այս պատկերին մէջ: Եւրոպայի կողմերը մարդիկ երբեմն չենքի տախ-տակամածներու (խփու խփու) վրայ սայլի անիւ կը դնեն, որպէս զի արա-գիին իր բոյնը չինէ հոն:

Այս թռչունները յարգի են, քանզի միասակար սողունները և ճճիները կը շնորհեն: Անոնք իրենց երկու կտուցն իրարու զարնելով տեսակ մը պզուկ կը հանեն, և այս միայն է անոնց ծայ-նը: Աստուած զանոնք արտուտի և սո-խակի պէս երգելու համար ստեղծած չէ: Թռչուններէն ոմանք օդով հա-մար, ոմանք՝ գեղեցիկութեան համար, ուրիշներն ալ իրենց քաղցրածայն եր-գերովը մարդիկ զուարճացնելու հա-մար ստեղծուեցան:

ՇՈՂԵՆԱՆ ԱՅ ՎՐԱՅ ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԻ

1. Այս թեթեւ կարգացող տղայոց շատերը թերևս տեսած չեն ոչ շոգե-նաւ, ոչ առագաստաւոր նաւ, ոչ ալ ջուր այնչափ լայն և խոր՝ որ նաւ մը կարենայ անոր վրայ երթալ դալ:

Եթէ ձենէ մէկը երթայ այն մե-ծամեծ նաւերուն վրայ որ հաստան-դնուպոլէն ելլելով շատ հեռու տե-ղեր կ'երթան, շատ զարմանալի բա-նէր պիտի տեսնէ, որոնց ոմանք կը հասկնան ինչպիսի կարողութիւն:

Շոգենաւը մեծ երկաթաշէն տուն

է: որոնք բոլոր զոմաներն իր յարկին կամ տանիքին վրայ են: Բայց նաւը ուրիշ կողմանէ ալ տուներու չեն նմանիր: Շատ երկայն են, ոմանք մինչև հարիւր յիսուս, կամ հարիւր եօթանասուն կամքուն, մինչ անոնց լայնութիւնը հազիւ 13 կամ 20 կան-գուն կայ: Նաւերուն մէկ ծայրը բո-լորի է և միւս ծայրը սուր, որպէս զի նաւը կարող ըլլայ ջուրը ճեղքե-լով առաջ երթալ:

3. Երբ մէկը նաւակով մը մեծ շոգե-նաւի մը քով կ'երթայ, 8 կամ 10 ոտք սանդղէ մը վեր ելլելու է որ նաւին տանիքին վրայ ելլէ. այս-չափ բարձր է նաւին տանիքը ջուրին երեսէն. և եթէ նաւին այն մասը որ ջուրին մէջն է տեսնել կարելի ըլ-լար, պիտի տեսնուէր որ նաւին տա-նիքը ջուրին երեսէն որչափ վեր է, յատկապէս ալ դրեթէ նոյնչափ վար է: ջուրին երեսէն մարմանայի բան մ'ալ կ'ալ է որ, նաւերուն տանիքին վրայ 30 կամ 40 կանգուն երկայն կայմեր տնկուած են: Այս կայմերուն վրայ չունաներ կան, որոնց ծայրերը կա-պուած են նաւին տանիքին եզերը-նեւուն:

4. Շոգենաւին մէջտեղը երկաթէ ծխնելոյղ մը կայ, այնպէս լայն որ մե-ջը պզտիկ աղայ մը կրնայ առանց ծը-ռելու քալել, եթէ ծխնելոյղը պտու-կած ըլլայ: Ծխնելոյղին տակը հոնց կայ, ուր ամէն օր քանի մը ձիւ բեռ-ածուխ կը վառի ջուրը եռացնելու համար, որմէ մեքենան շարժող շոգին յատ ալ կու գայ: Շոգենաւին մէջ այս մեքենան կը տեսնուի, և շատ զուար-ճալի է անոր շարժելով նաւը յատ ալ մշտը տեսնել: Տղայութեանս ա-տենը ես Խիսթեղով կը նայէի այս մեքենային, երբ շոգենաւի մէջ կը դառնուէի:

5. Շոգենաւին մէջ կան շտեմարանի կամ համբարանոցի նման տեղեր, ուր բեռիք կը դրուին, այսինքն քուր-ձերով ցորեն, մեծամեծ ծրարներով լաթ և կերպաս, հակերով բամբակ, որոնք այն շտեմարաններուն մէջ դրուելով կը սնորհին քաղքէ քաղքը:

Այսպիսի մեծ շոգենաւաց մէջ հար-կաւ այլեայլ արհեստներ գիտցող շատ մարդիկ կը գործածուին, զորո-րինակ, նաւատիներ, հիւսեր, դար-բիներ, մեքենագործներ, կրակա-վառք որ իրենց բոլոր կեանքը կան-ցունեն կաթսային ջուրը եռացնող կրակը վառ պահելու հնոցին մէջ շարունակ ամուխ նետելով: Շոգե-նաւին մէջ կան նաև հացագործներ, և խոհարարներ, և բաց ատնոցմէ շատ ճամբորդներ:

Երկաթի կտորի մը ջուրին երեսը լողալը երբէք տեսած էք: Ոչ քայց հոս ահա երկաթէ ահագին նաւ մը

մէջը 2,000 ձիւ բեռան ճանրու-թեամբ այլեայլ վաճառներով և 2 կամ 3 հարիւր մարդով, սակայն չնկղմիր: Ասոր պատճառն ինչ է: Առ պղնձէ կաթնայ մը և դիր ջուրին մէջ, և պիտի տեսնես որ կաթնայն ջուրին ե-րեսը կը լողայ: Ասոր պատճառը սա է: Կաթնայն, իր ճանրութեանը նայելով, ջուրին վրայ շատ տարածուած է, այնպէս որ տակի ջուրին զօրութիւնը զանի վեր կը բռնէ: Նաւերն ալ ի-րենց ճանրութեանը նայելով ջուրին երեսին վրայ շատ տարածուած ըլ-լալով կը լողան:

ՀԻՆ ԼՈՅՍ ՄԸ

Իբր 1200 տարի առաջ Փոքր Ասիոյ մէջ Կեսարիոյ մօտ Սերգիոս անուն մարդ մը կար: Ասիկա իր պատանե-կութեան ատենը կը կարճէր թէ Աստ-



ուածաշունչը շատ բարձր գիրք մը ըլ-լալով, հասարակ ժողովուրդէն կար-գացուելու յարմար չէր: Օր մը պա-ռուս կին մը հարցուց անոր. «Կը կար-գանս Աստուածաշունչը»։ «Սերգիոս պա-տասխանեց. «Աստուածաշունչին մէջ այնպիսի բարձր խորհուրդներ կան, որ քահանայք միայն կարող են հաս-կընալ այն գիրքը»։ Կինը սա պատաս-խանը տուաւ անոր. «Սուրբ գիրքը քո-րք մարդոց տրուած է, և Աստուած կ'ուզէ որ ամէն մարդ անկէ սորվի ճշմարտութիւնը»։ Հասկցուց անոր նաև թէ քահանայք ինչ պատճառնե-րու համար այն գիրքը կարգալ ժո-ղովուրդին կարգելին: Այս խօսքը Սերգիոսին ուշադրութիւնն արթն-ցուց, և խիտն սկսաւ Սուրբ գիրքը կարգալ: Ուղիղ մտօք Աստուածա-շունչը կարգացողները համարու-թիւ-նը կը սորվին անկէ այնպէս ինչպէս որ սորվեցուց Յիսուս: Սերգիոսին ալ

այսպէս եղաւ : Այս մարդը Սուրբ գիրքը կարդալով այն աստիճան շարժեցաւ, որ չկրցաւ այլ ևս ըսել, և գրեթէ բոլոր Փոքր Ասիա պատեւով Աւետարանը քարոզեց ինչպէս որ գրուած է, և ցուցուց թէ ինչպէս կորուսած են անոնք որ, փոխանակ ընդունելու Քրիստոսի խօսքերը, մարդոց սորվեցուցածները կ'ընդունին :

Սերգիոսին այս քարոզութիւնը թշնամիներ հանեց անոր գէմ, և Սերգիոս սպաննուեցաւ, վասն զի Սուրբ գրոց ճշմարտութիւնը կը սորվեցնէր ուրիշներուն :

Այս յօդուածին գլուխը գրուած պատկերը կը ցուցնէ Սերգիոսին ծառ մը կտրելը կացնով, քանզի Պօղոս առաքելոյն պէս այս քարոզիչն ալ արհեստ մը ունէր, և կը գործէր, երբ քարոզելու դժուար չէր : Օր մը այսպէս աշխատած ատենը, անոր ետեւէն թշնամի մը գալով նիզակով զարկաւ և սպաննեց զանի :

**ԱԶՆԻԻ ՎՐԷԺԻՆԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ**

Քանի մը տարի առաջ Եւրոպայի քաղաքներէն մէկուն մէջ բնակող հարուստ Հրեայ մը, նոյն քաղքին հիւանդներուն համար հիւանդանոց մը շինելու նպատակաւ մեծ գումար մը ստակ տուաւ, և սա պայմանը միայն գրաւ որ, երբ հիւանդանոցը շինուի, և հիւանդները հոն ընդունուելու սկսին, սենեակ մը սահուի յատկապէս Հրեայ հիւանդներու համար :

Քաղքին կառավարութիւնն ընդունեց անոր նուէրը, և հիւանդանոցը շինուեցաւ, բայց անոր վրայ հոգաբարձու գրուող անձինք չուզեցին կատարել Հրեայ պայմանը, և Հրեաներէն ոչ ոք ընդունուեցաւ հոն : Ի՞նչ կը կարծէք, Հրեան ասոր փոխարէն ինչ վրէժխնդրութիւն ըրաւ : Նոյն իսկ Յիսուսի աշակերտի մը վաշելուչ վրէժխնդրութիւն մը : Գնաց և մեծ ծախքով ուրիշ, առաջնոյն չափ մեծ, հիւանդանոց մը շինեց, հիւանդաց համար ամէն հարկաւոր բաները հոն պատրաստեց, և Հրեայ յատուկ հիւանդանոց ըրաւ զայն, բայց անոր մէջ զատ սեղ մը որոչեց՝ այն հիւանդանոցը մտնել ուղող Քրիստոնեայք հոն ընդունելու համար : Այն քաղքին կառավարութիւնը ոչ ապաքէն իր ըրածին վրայ ամբշցաւ : Յիւրաւի պատճառ ունէր անջալու : Անտարակոյս զգացին այն մարդիկը որ, Հրեան այնպէս ընե-

լով՝ անոնց գլխուն վրայ կրակի կայծեր գիզեց :

**ՆԿԱՐՆԵՐՈՎ ԿՍՐՊՍԼՈՒ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ**

Ահա այս անգամ ալ Սուրբ գիրքէն տուներ կը դնենք, որոնց քանի մը խօսքերը նկարով ցուցուած են :

**5. Կռիւրն սկզբնաւորութիւնը**



կը նմանի . ուրեմն վէճը չըսընկած ետ քաշուէ :

6. Առակը յիմարին բերին մէջ գինովին



պէս է :

**7. Ինչպէս կատղած**



այնպէս է այն մարդը որ իր բարեկամին նենգութիւն կ'ընէ :

8. Իր տեղէն թափառական եղող մարդը իր



պէս է :

Փետրուարի Աւետարելին մէջ նկարով կարդալու խօսքերը կը դասուին 1. Սաղմ. Ա. 4 : 2. Սաղմ. Ա. 3 : 3. Առակ. ԻԳ. 32 : 4. Եսայի ԾԳ. 7 :

**ԱՆՁԲԵՒՈՏ ՕՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԻՍՂ.**

Տղոցմէ ոմանք սովոր են խօսքի խաղերով զբօսնուլ, երբ օգին դէշութեանը պատճառաւ դուրս չեն կրնար ելլել : Այս տեսակ խաղեր սա

աղէկութիւնն ունին որ, ծնողք և ուրիշ չափահաս անձինք ալ, ի նորհօ տղայոց, կրնան անոնց հետ խաղալ, եթէ կը հաճին :

Այս տեսակ խաղերէն մէկը հոս նկարագրենք :

**ՔԱՂՔԻՆՑ ՄԷՋ ՕՏԱՐԱԿԱՆ ՄԸ**

Այս խաղը շատ գիւրբին է և հարցմամբ ու պատասխանով կ'ըլլայ : Իւրաքանչիւր ոք այբուբենին մէկ գիրը կ'ընտրէ իրեն համար, և պէտք է որ իրեն եղած հարցումներուն իբր պատասխան ըսած բառը նոյն գրով սկսուած ըլլայ : Խաղացողներուն մէկն ալ դատաւոր կ'ընտրուի, որուն գործն է նայիլ որ պատասխաններն այս կանոնին համաձայն ըլլան :

Մենք հոս իւրաքանչիւր խաղացող իր ընտրած գրոյն անուամբը կը կոչենք, Ա, Բ, Գ, Դ, Ե, ևն :

Ա կը սկսի ըսել . «Այս քաղաքն օտարական մը եկաւ :» Բ կը հարցնէ Ա ին . «Ի՞նչ պատճառաւ եկած է :» Ա կը պատասխանէ, «Ազգասիրութեան :» Գ կը հարցնէ Ա ին, «Ի՞նչ բերած է :» Ա կը պատասխանէ, «Արիւր :» Դ կը հարցնէ, «Ի՞նչ պիտի տանի :» Ա կը պատասխանէ, «Ահնոց :» Ե կը հարցնէ, «Ուստի եկած է :» Ա կը պատասխանէ, «Ամերիկայէն :» Չ կը հարցնէ, «Ո՞ւր պիտի երթայ :» Ա կը պատասխանէ, «Ագրիանուպոլիս :» Այսպէս ուրիշները, որչափ տղայք որ կան :

Ա ին գործը լմննալէն ետքը, կարգը կու գայ Բ ին, որ կ'ըսէ նոյն խօսքը, «Այս քաղաքն օտարական մը եկաւ :» Ա կը հարցնէ անոր, «Ի՞նչ պատճառաւ եկած է :» Բ կը պատասխանէ, «Բռնութեան :» Գ կը հարցնէ, «Ի՞նչ բերած է :» Բ կ'ըսէ . «Բողոք մը :» Դ կը հարցնէ, «Ի՞նչ պիտի տանի :» Բ կը պատասխանէ, «Բարկութիւն :» Այսպէս յառաջ կը տարուի խաղը :

Հարցումներուն շուտով պատասխան տրուելու է, և եթէ մէկը սխալելով իր ընտրած գիրէն տարբեր գրով սկսուած բառ մը կ'ըսէ ի պատասխան, պիտի կրէ ինչ պատիժ որ կը դնէ խաղին դատաւորը :

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն  
Խմբագիր Ծ. Ք. ԿՐԻՆ

**ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ**

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵՆ  
Չագմագճըլար, Յակոբեան խան, Թիւ 12.